

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾԶԲ-20-4/3-5**

բ. Երևան

«13».03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ԷՍԿԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման որջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝

**ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ**, որտեղ՝

**ՎԳ**-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

**ՄԳ**-ն ընտրված մասնակցի առաջարկված հանրագումարային գինն է.

28-րդ չափաբաժնի համար՝ 4,828,000 ՀՀ դրամ,

29-րդ չափաբաժնի համար՝ 5,374,000 ՀՀ դրամ,

**ՆԳ**-ն ծառայության մատուցման համար սահմանված միավոր գների հանրագումարն է.

28-րդ չափաբաժնի համար՝ 5,748,666 ՀՀ դրամ,

29-րդ չափաբաժնի համար՝ 6,398,234 ՀՀ դրամ,

**Ծ**-ն մատուցված ծառայության միավորի գինն է.

**Բ**-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>1</sup>: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՔԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

<sup>1</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:



7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:



7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը:

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>2</sup>

7.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈւ սպառազինության վարչությունը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԳՆՈՐԴ**  
ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ, ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն  
Հ/հ 900011144079  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Տնօրեն  
  
Ն. ՅՈՒՉՅԱՆ 

**ՎԱՃԱՌՈՂ**  
«ԷԼԻՏ ԷՄՎԵ» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ.քն. 30  
«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1570030407870200  
ՀՎՀՀ 00465342  
  
Ս. ՄԿՐՏՉՅԱՆ 

<sup>2</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***  
**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

- Կատարողի կողմից պետք է տրվի երաշխիք փոխարինված պահեստամասերի համար 6 ամիս կամ 10000 կմ:
- Հիմնական նորոգում անցած ագրեգատների(շարժիչ,փոխանցումների տուփ, բաժանարար տուփ,կամրջակներ) շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 50000 կմ:
- Ծառայությունը մատուցվում է ըստ հայտերի: Հայտի թույլտվությունը ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից էլեկտրոնային տարբերակով տրվում է ծառայությունը մատուցողին:  
Առանձին դեպքերում ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից կարող է տրվել բանավոր թույլտվություն , որը պետք է հետագայում ձևակերպել գրավոր ձևով: Մինչև սպասարկելն ու նորոգելը ծառայությունը մատուցողի և 14746 զորամասի ներկայացուցչի կողմից կազմել արատավորման նախնական զննման ակտ կազմակերպության տնօրենի, վարորդի, ՀՀ ՊՆ 14746 զորամասի ներկայացուցչի և ՀՀ ՊՆ 14746 զորամասի հրամանատարի ստորագրությամբ և կնիքով, որից հետո երեք օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն:
- Ծառայությունը պետք է մատուցվի (մեքենան նորոգվի)մեքենան նորոգման հանձնելու պահից 7 օր ներառյալ արատավորման աշխատանքները, որից հետո կազմել կատարողական ակտ վերոնշյալ անձանց ստորագրություններով, կնիքով և ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն: Զորքերից նորոգման ենթակա տեխնիկայի փաստաթղթերը ստորագրվում է նաև զորքերի ներկայացուցչի կողմից:
- Ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի, ներկերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:
- Միներալ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 6000 կմ.
- Մինթեթիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 10000 կմ.
- Կիսասինթեթիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 8000 կմ.
- Փոխարինված ագրեգատները և պահեստամասերը պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 14746 զորամաս (ընդունումը և տեղափոխումը զորամասի ուժերով):

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**


Ծառայության				
Հ/Հ	Ձ/հ	անվանումը	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամանակացույց
1	28	ՎԱԶ-2112	300000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի /ո/ պարբերության պահանջները:
2	29	ՎԱԶ-21144-110-32	300000	


**Մեծ ծավալի պարճառով ապրանքների և ծառայությունների միավորի գները ներկայացված են կից Հավելված 1-ով:**

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

Հ/Հ	Ձ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	CPV կոդը	
1	28	ՎԱԶ-2112	50111130/ 518/9/1	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
2	29	ՎԱԶ-21144-110-32	50111130/ 519/9/1	

**ԳՆՈՐԴ**  
ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ ՊՆ ՆՏԱ ղեկավարության տնօրենի պետ  
  
Ն. ՅՈՒԶՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**  
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ  
Տնօրեն  
  
Ս. ՄՎՐՏՅԱՆ

**Հավելված 1**

Հ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չափ. միավ	ՎԱԶ-2112	ՎԱԶ-21144-110-32
			Միավորի գինը ՀՀ դրամ	Միավորի գինը ՀՀ դրամ
1	Բռնկման համակարգի ստուգում	հատ	անվճար	անվճար
2	Կցորդման համակարգի ստուգում	հատ	անվճար	անվճար
3	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
5	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
6	Գնկալարման համակարգի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
7	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	30000	30000
8	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	հատ	44000	45000
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	45000	45000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	35000	35000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	հատ	33000	22000
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկեթով	հատ	15000	15000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	5500	5500
14	Շարժիչի փականների զապանակների փոխարինում	հատ	550	550
15	Փականների խցուկների փոխարինում	1 կ-տ	18000	18000
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում	հատ	5500	5500
17	Շարժիչի մխոցաօդերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	1 կ-տ	44000	45000
18	Ծնկաձև լիսեռի հղկում	հատ	11000	12000
19	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	հատ	16500	16500
20	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում	1 կ-տ	11000	11000
21	Ծնկաձև լիսեռի ատամնահիվի փոխարինում	հատ	1100	1100
22	Ծնկաձև լիսեռի ուղղում	հատ	16500	16500
23	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	6000	6000
24	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	15000	15000
25	Շարժիչի բլուկի փոխարինում	հատ	44000	44000
26	Շարժիչի գրանի փոխարինում (гирзовка)	հատ	11000	11000
27	Մխոցի փոխարինում I հատ	հատ	1100	1100
28	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	5500
29	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	15000	15000
30	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	հատ	1100	1100
31	Փոկանիվի փոխարինում	հատ	6000	6000
32	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	հատ	12000	12000
33	Շարժիչի շղթայի փոխարինում	հատ	0	0
34	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	հատ	6000	6000
35	Շարժիչի քարտերի փոխարինում,	հատ	5500	5500
36	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	հատ	3000	3000
37	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	հատ	6600	6600
38	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	հատ	1100	1100
39	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	հատ	6000	6000
40	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	հատ	1100	1100
41	Շարժիչի յուղի ռադիատորի փոխարինում	հատ	0	0

42	Յուդի ծորակի փոխարինում	հատ	0	0
43	Օդաքաշակ փողակի փոխարինում	հատ	1100	1100
44	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	3000
45	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	հատ	2200	2200
46	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2200	2200
47	Թափանիվի առանցքակալի փոխարինում	հատ	0	0
48	Շարժիչի կափույրի փոխարինում	հատ	2200	2200
49	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	հատ	2200	2200
50	Շարժիչի շարժաթևի փոխարինում	հատ	2200	2200
51	Մխոցային օդակների փոխարինում	1 կ-տ	11000	11000
52	Ատամնանիվի փոխարինում	հատ	1100	1100
53	Ատամնանիվի փոկի փոխարինում	հատ	10000	10000
54	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	հատ	1100	1100
55	Սուխարիկ փոխարինում	1 կ-տ	3000	3000
56	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	հատ		
57	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	հատ	2000	2000
58	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	հատ	2000	2000
59	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	11000	11000
60	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Զցո) իրանի փոխարինում	հատ	1100	1100
61	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	հատ	5000	5000
62	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	հատ	1000	1000
63	Շարժիչի գամասեղի փոխարինում	հատ	1100	1500
64	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	հատ	2000	2000
65	Գլխիկի հեղույսի փոխարինում	հատ	1100	1100
66	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	հատ	1100	1100
67	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	հատ	2200	2200
68	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	հատ	5500	5500
69	Շարժիչի քիմիական լվացում	հատ	6000	6000
70	Բաշխիչ լիսեռի նորոգում /վռանի տեղադրում/	հատ	30000	30000
71	Ծնկածև լիսեռի կարգավորող տափողակի տեղի նորոգում	1 կ-տ	5000	5000
72	Կափույրների հղկում	հատ	1500	1500
73	Կափույրի բնիկի նորոգում /զնեզո/	հատ	2200	6000
74	Պարագլխ լիսեռի հղկում և վռանի տեղադրում	հատ	0	10000
75	Շրջանակի ուղղում, նորոգում	հատ	0	0
76	Չալանի թերթիկի փոխարինում	հատ	0	0
77	Յուդի և յուղի գոտիչի փոխարինում	հատ	1200	1200
78	Ավտոմեքենայի յուղում	հատ	1100	1200
79	Համակարգչային ախտորոշում	հատ	5000	5000
80	Յուդի ռադիատորի փոխարինում	հատ	0	0
81	Յուդի ռադիատորի նորոգում	հատ	0	0
82	Վառոցքի մոմի փոխարինում	1 կ-տ	1700	1700
83	Վառելիքի նուրբ մաքրման գոտիչի փոխարինում	հատ	700	700
84	Օդի գոտիչի փոխարինում	հատ	700	700
85	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1700	1700
86	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1100	1100
87	Օդի գոտիչի փողակի հանում և տեղադրում	հատ	500	500
88	Կարբուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	հատ	0	0
89	Կարբուրատորի վերանորոգում	հատ	0	0

90	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	1 կ-տ	4400	10000
91	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	1 կ-տ	10000	10000
92	Բոցամուղի կոդավորում	1 կ-տ	1000	1000
93	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	1 կ-տ	3300	10000
94	Բենզամուղիչի փոխարինում	հատ	7000	7000
95	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	հատ	7000	7000
96	Վառելամյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2500	2500
97	Բռնկման կարգավորում	հատ	2500	2500
98	Ղեկավարման քրկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2500	2500
99	Ղեկավարման քրկի վերանորոգում	հատ	20000	20000
100	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	6000
101	Վառելիքի բաքի մաքրում	հատ	3000	3000
102	Օդի ծախսի տվիչի փոխարինում	հատ	1100	1700
103	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	հատ	1100	2000
104	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	հատ	2000	2000
105	Բենզոբաքի բենզամուղիչի ցանցի փոխարինում	հատ	1100	7000
106	Բենզոբաքի բենզամուղիչի ցանցի մաքրում	հատ	500	500
107	Յտղի ճնշման տվիչի փոխարինում	հատ	1100	2000
108	Տվիչի փոխարինում	հատ	1100	1100
109	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	հատ	2200	3000
110	Օդազտիչի իրանի փոխարինում	հատ	2000	2000
111	Պագոսի ճուպանի փոխարինում կամ նորոգ.	հատ	0	0
112	Հովհարի փոխարինում	հատ	2200	5000
113	Հովհարի փակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000
114	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	6000
115	Ռադիատորի նորոգում	հատ	6000	6000
116	Շերտափեղկի փոխարինում	հատ	0	
117	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	հատ	0	
118	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	1100	1700
119	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	հատ	2500	2500
120	Ջրի ծորակի փոխարինում	հատ	2000	2000
121	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	հատ	3300	5000
122	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3300	5000
123	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	հատ	12000	12000
124	Վառարանի ռադիատորի նորոգում	հատ	3000	3000
125	Վառարանի շարժիչի փոխարինում	հատ	12000	12000
126	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	հատ	6000	8000
127	Ջեռուցիչի իրանի փոխարինում	հատ	2200	12000
128	Թերմոստատի փոխարինում	հատ	3300	6000
129	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	հատ	6000	6000
130	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	հատ	1100	1100
131	Գեներատորի փակի փոխարինում	հատ	3300	2000
132	Գեներատորի փակի ձգող հողովակի փոխարինում	հատ	3300	2000
133	Ջրի ռադիատորի վերանորոգում	հատ	10000	10000
134	Թերմոստատի միջադիրի փոխարինում	հատ	3000	3000
135	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3500	3500
136	Խլարարի խողովակի փոխարինում	հատ	3500	3500
137	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	հատ	1000	1000
138	Խլարարի ներդիրի փոխարինում	հատ	1500	1500
139	Խլարարի կախոցի փոխարինում	հատ	1000	1000

140	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	3000	3000
141	Դիֆուզորի փոխարինում	հատ	2200	5000
142	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
143	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	հատ	0	0
144	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	հատ	12000	12000
145	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1100	3000
146	Կցորդման ոտնակի կարգավորում	հատ	1500	1500
147	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4000	4000
148	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
149	Կցորդման երկծանի փոխարինում	հատ	0	15000
150	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	20000	20000
151	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	հատ	5500	5500
152	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	հատ	2200	2200
153	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	հատ	0	5500
154	ՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	12000	12000
155	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	հատ	12000	12000
156	ՓՏ-ի պատյանի փոխարինում	հատ	5500	5500
157	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	հատ	3300	12000
158	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	հատ	5500	12000
159	ՓՏ-ի առանձնակալի փոխարինում	հատ	3300	12000
160	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5500	12000
161	ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	հատ	5500	12000
162	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	հատ	5500	12000
163	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	3300	12000
164	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	հատ	3000	3000
165	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	հատ	3000	3000
166	ՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	1500	1500
167	Վազբաշարի շարժարների փոխարինում	հատ	0	0
168	Փոխարկման մեխանիզմի կապրոմների փոխարինում	հատ	1500	1500
169	Կցորդման եղանի փոշեփկնոցի փոխար.	հատ	0	0
170	Կցորդման կարգավորում	հատ	1500	1500
171	Կցորդման ոտնակի կարգավորիչ տափողակների փոխարինում	հատ	0	0
172	Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի փոխարինում	հատ	0	0
173	Փոխանցման կարգավորող ձողի փոխար.	հատ	3000	3000
174	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	հատ	0	0
175	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
176	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	հատ	0	0
177	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	0	0
178	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	0	0
179	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	հատ	0	0
180	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	հատ	0	0
181	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	0	0
182	Բաշխիչ տուփի երկծանի փոխարինում	հատ	0	0
183	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	հատ	0	0
184	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	հատ	0	0
185	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	հատ	0	0

186	Կարդանային լիսեռի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
187	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	0	0
188	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	հատ	0	0
189	Բաշխիչ տուփի կալունակի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
190	Կարդանային լիսեռի միջ. կախացի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
191	Կարդանի հեղույսի փոխարինում	հատ	0	0
192	ԲՏ-ի ելուստի փոխարինում /ֆլանեց/	հատ	0	0
193	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	0	0
194	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում	1 կ-տ	0	0
195	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում	1 կ-տ	0	0
196	ԲՏ-ի արգելակման աշխատանքային գլանի փոխարինում	հատ	0	0
197	Առջևի կամրջակի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	27500	27500
198	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	հատ	12000	12000
199	Առջևի կամրջակի կիսատնու համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
200	Առջևի կամրջակի կիսատնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	1 կ-տ	0	0
201	Կամրջակի յուղի փոխարինում	հատ	1100	1100
202	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
203	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	3300	3300
204	Հետևի կամրջակի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
205	Հետևի կամրջակի լիակատար քանդում, արատավորում և հավաքում	հատ	0	0
206	Հետևի կամրջակի կիսատնու համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
207	Հետևի կամրջակի կիսատնու առանցքակալի փոխարինում	հատ	0	0
208	Հետևի կամրջակի կիսատնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	1 կ-տ	0	0
209	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	0	0
210	Առջևի կիսատնուները միացնող ազույցի փոխարինում	հատ	0	0
211	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում	հատ	0	0
212	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում	հատ	0	0
213	Տանող կցաշարքի փոխարինում	հատ	0	0
214	Սատելիտների հավաքման իրանի և սոնիի փոխարինում	1 կ-տ	5500	5500
214	Տրավերսի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
215	Չախ կամ աջ հողակապի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000	5000
216	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	4400	5000
217	Առջևի անվակունդի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4000	4000
218	Հետևի անվակունդի համում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3300	4000
219	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	5000	5000
220	Անվակունդի զամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	հատ	1200	1200
221	Չախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	հատ	3300	5000
222	Չախ կամ աջ հողակապի նորոգում	հատ	2000	2000
223	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	հատ	3300	5000
224	Եկվորնու փոխարինում	հատ	0	0
225	Ռեզրավոյի փոխարինում	հատ	0	0
226	Ճոճանակային լծակի փռանի փոխարինում	1 կ-տ	0	0

227	Ճոճանակային լծակի փոխարինում	հատ	0	0
228	Ճոճանակային լծակի կալունակի փոխարինում	հատ	0	0
229	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	2200	4000
230	Առջևի զսպանակի փոխարինում	հատ	4000	4000
231	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3300	4000
232	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	հատ	2200	4000
233	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	հատ	2000	2000
234	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	հատ	0	0
235	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000
236	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1 կ-տ	2200	4000
237	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	հատ	2000	2000
238	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	հատ	2200	4000
239	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
240	Վերևի լծակի վռանների փոխարինում	1 կ-տ	0	0
241	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	հատ	0	0
242	Գնդե հողակալերի պատյանի փոխարինում	հատ	1500	1500
243	Գնդե հողակալի փոխարինում	հատ	1500	1500
244	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2200	3000
245	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1 կ-տ	2200	3000
246	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	հատ	0	0
247	Կայունարարի կալունակի փոխարինում	հատ	1500	1500
248	Հետևի զսպանակների փոխարինում	հատ	2000	2000
249	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1500	1500
250	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	18000	18000
251	Զսպանի փոխարինում	հատ	0	0
252	Զսպանի վռանների փոխարինում	1 կ-տ	0	0
253	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	հատ	2000	2000
254	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1 կ-տ	2000	2000
255	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1 կ-տ	2000	2000
256	Զսպակի մետաղական վռանների փոխարինում	հատ	0	0
257	Ստրումյանի փոխարինում	հատ	0	0
258	Զսպանի ականջողի փոխարինում	հատ	0	0
259	Զսպանի ականջողի հեղույսի փոխարինում	հատ	0	0
260	Զսպանակի մեկուսացնող ռետինե միջադիրի փոխարինում	1 կ-տ	4000	4000
261	Անվակունդի առանցքակալների բացակի կարգավորում	հատ	1200	1200
262	Ղեկասյունակի հիմնական նորոգում	հատ	10000	10000
263	Ղեկասյունակի արտրիկի փոխարինում	հատ	10000	10000
264	Ղեկասյունակի առանցքային սառու փոխարինում	հատ	1100	10000
265	Ղեկասյունակի խաչուկների փոխարինում	հատ	2200	6000
266	Ղեկասյունակի վերանորոգման հավաքածույի փոխարինում	1 կ-տ	5500	10000
267	Ղեկասյունակի քանդում, արատավորում, հավաքում	հատ	10000	10000
